352

Էլմ. 252

1. Ի՜նչ մութ էր գիշերն, որ պատած էր հոգիս,
Ի՜նչ խոր էր տառապանքն իմ Փրկչիս,
Երբ որ անցավ հոգվույս ալեկոծ ծովեն,
Ցրվեց խավարն ու սիրտս ըրավ շեն:

Մինչև Գողգոթա գնաց ինձի համար,
Ինձի համար, ինձի համար,
Մինչև Գողգոթա գնաց ինձի համար,
Մեռավ, որ ինձ կյանք տար:

2. Մեղքիս տակ դողալով՝ ընկա ոտքերուն,
Անծանոթ էր ինձ ձրի փրկություն,
Հուզիչ ձայն մը ըսավ. «Փարատե՛ վախերդ,
Հիսուս ներեց բոլոր քո մեղքերդ»:

3. Հիանալի սեր մ'էր Հիսուս ցույց տվավ,
Գահը թողելով՝ Գողգոթա եկավ,
Հնձանի մեջ կոխեց Ինքն առանձին,
Անհուն փա՛ռք սուրբ անվան իմ Փրկչին:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025